ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.01.2020
344-39

ՀՀ Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Տեղեկություն ստանալու քանի՞ հարցում է ստացել Երևանի քաղաքապետարանը 2018 և 2019 թթ.-ի ընթացքում՝ ըստ տարիների:
2. 2018 և 2019 թթ.-ի ընթացքում գրանցված տեղեկություն ստանալու հարցումներից քանի՞սն են ստացվել էլեկտրոնային եղանակով՝ ըստ տարիների:
3. 2018 և 2019 թթ.-ի ընթացքում գրանցված տեղեկություն ստանալու հարցումներից քանի՞սն են ստացվել լրագրողների/լրատվամիջոցների կողմից՝ ըստ տարիների):
4. 2018 և 2019 թթ.-ի ընթացքում գրանցված տեղեկություն ստանալու հարցումներից քանի՞սն են բավարարվել, քանի՞սն են մերժվել և քանի՞սը վերահասցեագրվել՝ ըստ տարիների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան